ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«19» հունվարի 2023 թվականի N 48-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՄԽԻԹԱՐ ՆԻԿՈԼԻ ՀՈՒՆԱՆՅԱՆԻՆ ՊԱՂՊԱՂԱԿԻ ԵՎ ԸՄՊԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԵՏ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿԻ N 4/1 ՀԱՍՑԵԻ 7.09 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Վարդանանց հրապարակի N 4/1 հասցեի 7.09 (յոթ ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով առանձնացված հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20122022-08-0015 վկայական):

Քաղաքացի Մխիթար Նիկոլի Հունանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին վերը նշված հասցեի 7.09 (յոթ ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը պաղպաղակի և ըմպելիքի վաճառքի կետ տեղադրելու նպատակով կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Նկատի ունենալով փաստացի իրադրությամբ պայմանավորված քաղաքաշինական հնարավորությունը, հաշվի առնելով, որ տրամադրված հողամասը գտնվում է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1] հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 205-Ա, 2021 թվականի ապրիլի 14-ի N 80-Ա որոշումները և քաղաքացի Մխիթար Նիկոլի Հունանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հունվարի 04-ին N 82 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Մխիթար Նիկոլի Հունանյանին, մինչև 2052 թվականի հուլիս ամիսը ներառյալ, պաղպաղակի և ըմպելիքի վաճառքի կետ տեղադրելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Վարդանանց հրապարակի N 4/1 հասցեի 7.09 (յոթ ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և տարեկան վարձավճար սահմանել 68064 (վաթսունութ հազար վաթսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սահմանված կարգով կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր (պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի գովազդի, առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժին):
3. Պաղպաղակի և ըմպելիքի վաճառքի կետի տեղադրման համար մեկամսյա ժամկետում սահմանված կարգով դիմել և ստանալ ճարտարապետահատակագծային առաջադրանք, ներկայացնել ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր և ստանալ շինարարության թույլտվություն: Նախագծով սահմանված ժամկետում ավարտել պաղպաղակի և ըմպելիքի վաճառքի կետի տեղադրման աշխատանքները և շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:
4. Հատկացված հողամասը քաղաքաշինական նպատակով օգտագործելու անհրաժեշտությունն առաջանալու դեպքում այն ենթակա է ազատման, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների առաջին իսկ պահանջով, առանց որևէ փոխհատուցման:

5. Պայմանագրի նոտարական վավերացումը և պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը կատարել քաղաքացի Մխիթար Նիկոլի Հունանյանի միջոցների հաշվին:
6. Առանց հաստատված նախագծի և շինարարության թույլտվության պաղպաղակի և ըմպելիքի վաճառքի կետը տեղադրելու դեպքում որոշումը համարել անվավեր և մեղավորներին ենթարկել վարչական պատասխանատվության:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մխիթար Նիկոլի Հունանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

18.01.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» հունվարի 2023 **թվականի** N 47-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՂԻՆԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊՈՂՈՏԱՅԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՕԹՅԱ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վաղինակ Պետրոսյանի 2023 հունվարի 11-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 11-ին 274 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Վաղինակ Պետրոսյանին Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտայի հարևանությամբ իրականացնել սուրճի բացօթյա վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի հունվարի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Վաղինակ Պետրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

ԱՊԱՊԻԿՅԱՆ

փոխարինող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<17>> հունվարի 2023 թվականի N 46 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՍՈՒՐԵՆ ՍԵՊՈՒՀԻ ՋԱՆՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Սուրեն Սեպուհի Ջանոյանի 2023 թվականի հունվարի 17-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Սուրեն Սեպուհի Ջանոյանին հետ կանչել իրեն տրամադրված ամենամյա արձակուրդից՝ 2023 թվականի հունվարի 18-ից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սուրեն Սեպուհի Ջանոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

17.01.2023

Հ

Ա. ՊԱՊԻԿՅԱՆ
փոխարինող

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» հունվարի 2023 **թվականի** N 45-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵ ՀԱՍՄԻԿ ՎԱՀԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԵՎ ԱՆԴՐԱՆԻԿ ՊՈՂՈՍԻ ԴԵՄԻՐՃՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՔՍՏԻԼԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ N 29/5 ՀԱՍՑԵԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ 53.35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԵՆՅԱԿՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 2 ՊԱՏՈՒՀԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Հասմիկ Վահանի Սահակյանին և Անդրանիկ Պողոսի Դեմիրճյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 28102022-08-0051 վկայական) Գյումրի քաղաքի Տեքստիլագործների փողոցի N 29/5 հասցեի արտադրամասի 53.35 (հիսուներեք ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով սենյակում ինքնակամ բացված է 2 (երկու) պատուհան:

Քաղաքացի Անդրանիկ Պողոսի Դեմիրճյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1 կետի և 18-րդ կետի դ ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Անդրանիկ Պողոսի Դեմիրճյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի նոյեմբերի 11-ին N 21283 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Հասմիկ Վահանի Սահակյանին և Անդրանիկ Պողոսի Դեմիրճյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Տեքստիլագործների փողոցի N 29/5 հասցեի արտադրամասի 53.35 (հիսուներեք ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով սենյակում ինքնակամ բացված 2 (երկու) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 5450 (հինգ հազար չորս հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Հասմիկ Վահանի Սահակյանին և Անդրանիկ Պողոսի Դեմիրճյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

13.01.2023

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ՊԱՊԻԿՅԱՆ**

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» հունվարի 2023 **թվականի** N 44 - Ա

«ԱՆԲԵՐԴ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇՉՈՐՍԻ ՓՈՂՈՑ N 4/4 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 41.93 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Անբերդ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 2640788 վկայական տրված 17.05.2011թ.-ին): Գյումրի քաղաքի Շչորսի փողոց N 4/4 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 41.93 (քառասունմեկ ամբողջ իննսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (39.36(երեսունիննն ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով հասարակական շինություն, որը հաշվառված է կադաստրի կոմիտեում 2022RFG72I ծածկագրով:

«Անբերդ» ՍՊԸ-ի տնօրեն Արտյոմ Մկրտչյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինությունը օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպնվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառույցը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի և հիմք ընդունելով «Անբերդ» ՍՊԸ-ի տնօրեն Արտյոմ Մկրտչյանը դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2021 թվականի դեկտեմբերի 29-ին N 22644 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. «Անբերդ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շչորսի փողոց N 4/4 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 41.93 (քառասունմեկ ամբողջ իննսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (39.36(երեսունիննն ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով հասարակական շինությունը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 316236(երեք հարյուր տասնվեց հազար երկու հարյուր երեսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Որոշումը ուժի մեջ է մտնում «Անբերդ» ՍՊԸ-ին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա.ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» հունվարի 2023 **թվականի** N 43-Ա

<< ԳՐԱՆԴ ՀՈԹԵԼ ԳՅՈՒՄՐԻ >> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ԱՐՏԱՇԵՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ 218 ՀԱՍՑԵՈՒՄՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով <<Գրանդ Հոթել Գյումրի>> ՍՊԸ տնօրեն Արտաշես Բաղդասարյանի 2023 թվականի հունվարի 5-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 5-ին 135 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Գրանդ Հոթել Գյումրի>> ՍՊԸ տնօրեն Արտաշես Բաղդասարյանին Գյումրի քաղաքի Շարա Տալյան փողոցի հարևանությամբ իրականացնել հանրային սննդի կազմակերպում և իրացում:
2. Թույլտվության գործողության վերջնաժամկետ սահմանել մինչև 2023 թվականի հունիսի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Գրանդ Հոթել Գյումրի>> ՍՊԸ տնօրեն Արտաշես Բաղդասարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

17.01.2023

X

Փոխարինող

Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հունվարի 2023 **թվականի** N 42-Ա

<<ԻՄՊԵՐԻԱԼ ԱԼԻԱՆՍ>> ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ 38/6 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով «Իմպերիալ Ալիանս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Սամվել Հարությունյանի 2023 թվականի հունվարի 9-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 9-ին 208 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել «Իմպերիալ Ալիանս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Սամվել Հարությունյանին Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ 38/6 հասցեում իրականացնել հանրային սննդի կազմակերպում և իրացում:
2. Թույլտվության գործողության վերջնաժամկետ սահմանել մինչև 2023 թվականի մարտի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Իմպերիալ Ալիանս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Սամվել Հարությունյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

17.01.2023

Փոխարինող
Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» հունվարի 2023 **թվականի** N 41-Ա

<<ԻՄՊԵՐԻԱԼ ԱԼԻԱՆՍ>> ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ 38/6 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<Իմպերիալ Ալիանս>> ՍՊԸ-ի տնօրեն Սամվել Հարությունյանի 2023 թվականի հունվարի 9-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 9-ին 207 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Իմպերիալ Ալիանս>> ՍՊԸ-ի տնօրեն Սամվել Հարությունյանին Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ 38/6 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի մարտի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Իմպերիալ Ալիանս>> ՍՊԸ-ի տնօրեն Սամվել Հարությունյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

Փոխարինող
Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» հունվարի 2023 **թվականի** N 40-Ա

<<ԳՐԱՆԴ ՀՈԹԵԼ ԳՅՈՒՄՐԻ>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ԱՐՏԱՇԵՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ 218 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով <<Գրանդ Հոթել Գյումրի>> ՍՊԸ տնօրեն Արտաշես Բաղդասարյանի 2023 թվականի հունվարի 5-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 5-ին 137 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել << Գրանդ Հոթել Գյումրի >> ՍՊԸ տնօրեն Արտաշես Բաղդասարյանին Գյումրի քաղաքի Աբովյան 218 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների վաճառք
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի հունիսի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում << Գրանդ Հոթել Գյումրի >> ՍՊԸ տնօրեն Արտաշես Բաղդասարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

Փոխարինող
Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» հունվարի 2023 **թվականի** N 39-Ա

<<ՍԱՀԱՐԱ>> ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ԱՂԱՍԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՐԱ ՏԱԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով <<Սահարա>> ՍՊԸ տնօրեն Աղասի Սահակյանի 2023 թվականի հունվարի 5-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 5-ին 118 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Սահարա>> ՍՊԸ տնօրեն Աղասի Սահակյանին Գյումրի քաղաքի Շարա Տալյան փողոցի հարևանությամբ իրականացնել հանրային սննդի կազմակերպում և իրացում:
2. Թույլտվության գործողության վերջնաժամկետ սահմանել մինչև 2023 թվականի մարտի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Սահարա>> ՍՊԸ տնօրեն Աղասի Սահակյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

Փոխարինող
Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«17» հունվարի 2023 **թվականի** N 38-Ա

«ՍԱՀԱՐԱ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ԱՂԱՍԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՐԱ ՏԱԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Սահարա» ՍՊԸ տնօրեն Աղասի Սահակյանի 2023 թվականի հունվարի 5-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի հունվարի 5-ին 120 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել «Սահարա» ՍՊԸ տնօրեն Աղասի Սահակյանին Գյումրի քաղաքի Շարա Տալյան փողոցի հարևանությամբ իրականացնել ոգելից խմիչքների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի մարտի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Սահարա» ՍՊԸ տնօրեն Աղասի Սահակյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

ԱՐԹՈՒՐ ՊԱՊԻԿՅԱՆ

Փոխարինող
Ա. ՊԱՊԻԿՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հունվարի 2023 թվականի N 37-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐՎԱ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 03-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդների նախնական գրաֆիկը՝ համաձայն հավելվածի:

16.01.2023

X

Ա.ՊԱՊԻԿՅԱՆ
փոխարինող

ք.Գյումրի

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի
փոխարինողի 2023 թվականի հունվարի
16-ի N 34-Ա որոշման

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՐԱՖԻԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

1	Աշխատակազմի քարտուղար	Բաղալյան Կարեն Հովհաննեսի	օգոստոս-դեկտեմբեր
2	Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստ	Մկրտչյան Մենուա Սերյոժայի	հուլիս-օգոստոս
3	Համայնքի անշարժ գույքի կառավարման բաժնի պետի ժ/պ	Գրիգորյան Գևորգ Սամվելի	նոյեմբեր
4	Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժ/պ	Ջանոյան Սուրեն Սեպուհի	դեկտեմբեր
5	Բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետի ժ/պ	Հակոբյան Շուռիկ Հայկի	ապրիլ
6	Գովազդի,առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի պետ	Թադևոսյան Հարություն Սամվելի	հուլիս-հոկտեմբեր
7	Ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի ժ/պ	Էլբակյան Նազելի Ջիովանիի	հուլիս
8	Կրթության բաժնի պետ	Ալեքսանյան Շողիկ Վիկտորի	սեպտեմբեր
9	Ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ	Ղազարյան Միխակ Հայկազի	օգոստոս
10	Տրանսպորտի բաժնի պետի ժ/պ	Ղազարյան Գեորգի Նիկոլայի	մայիս
11	Իրավաբանական բաժնի պետի ժ/պ	Չախոյան Արմենուհի Վարուժանի	հունվար
12	Անձնակազմի կառավարման բաժնի պետ	Վարդևանյան Սյուզաննա Սուրենի	փետրվար-օգոստոս
13	Քարտուղարության բաժնի պետ	Մեքինյան Աննա Հրաչիկի	հուլիս
14	Մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ	Թովմասյան Լիլիթ Արագածի	մայիս- հուլիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հունվարի 2023 **թվական** N 36-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՌՈՒԲԻԿԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Սեյրան Վարուժանի Սահակյանը (անձնագիր՝ AS 0299931, տրված՝ 24.07.2018թ. 001-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի Ղարիբջանյան խճղ. 2/12 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Անդրանիկ Ռուբիկի Շահբազյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2022 թվականի դեկտեմբերի 13-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Ա.Խաչատրյան 31 շենք թիվ 48 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Անդրանիկ Ռուբիկի Շահբազյանին ընտանիքին որպես սեփականություն:

Մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի հունիսի 1-ի թիվ 5 որոշմամբ Ա.Խաչատրյան 31 շենք 48 բնակարանը հատկացվել է Ռուբիկ Անդրանիկի Շահբազյանի 6 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, 2 աղջկան, 2 տղային և տրվել թիվ 48 միասնական օրդերը:

Դիմումին կից ներկայացվել է մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի հունիսի 1-ի թիվ 5 որոշմամբ տրված թիվ 48 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 30 -ի թիվ 22102102073 տեղեկանքը, «Գարուն» համատիրության 2022 թվականի դեկտեմբերի 6-ի N 137 տեղեկանքը, Ռուբիկ Անդրանիկի Շախպազյանի, Անի Ռուբիկի Շահբազյանի,Ալեքսան Ռուբիկի Շահբազյանի, Անդրանիկ Ռուբիկի Շահբազյանի անձնագրերի, Սուսաննա Հովհաննեսի Տեփանյանի, Արփինե Ռուբիկի Շահբազյանի նույնականացման քարտերի պատճենները, Անդրանիկ Ռուբիկի Շահբազյանի լիազորագիրը Գյումրի համայնքից Ա.Խաչատրյան 31 շենք թիվ 48 հասցեի բնակարանի համապատասխան բաժնեմասի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին, քաղաքացիներ Ռուբիկ Անդրանիկի Շախպազյանի, Անի Ռուբիկի Շահբազյանի,Ալեքսան Ռուբիկի Շահբազյանի, Սուսաննա Հովհաննեսի Տեփանյանի, Արփինե Ռուբիկի Շահբազյանի հայտարարությունները Գյումրի համայնքից ք. Գյումրի Ա.Խաչատրյան 31 շենք թիվ 48 հասցեի բնակարանը նվեր ընդունելու հրաժարվելու վերաբերյալ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2022 թվականի դեկտեմբերի 13-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2022 թվականի դեկտեմբերի 29-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Անդրանիկ Ռուբիկի Շահբազյանի լիազորված անձ՝ Սեյրան Վարուժանի Սահակյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Ք.Գյումրի Ա.Խաչատրյան փողոց 31 շենք թիվ 48 հասցեի 94.90 (իննսունչորս ամբողջ իննսուն հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1064974 վկայական):

բ) Գյումրի համայնքի Ա.Խաչատրյան 31 շենք թիվ 48 հասցեի բնակարանը 1991 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի հունիսի 1-ի թիվ 5 որոշում):

գ) Գյումրի քաղաքի Ա.Խաչատրյան փ. 31 շենք թիվ 48 հասցեում հաշվառված փաստացի բնակվում է 8 անձ՝ Սուսաննա Հովհաննեսի Տեփանյանը 1991 թվականից, Ռուբիկ Անդրանիկի Շախպազյանը՝ 1991 թվականից, Անդրանիկ Ռուբիկի Շահբազյանը՝ 2003 թվականից, Ալեքսան Ռուբիկի Շահբազյանը՝ 2007 թվականից, Ռուբիկ Անդրանիկի Շախպազյանը՝ 2015 թվականից, Կարինե Ալեքսանի Շահբազյանը՝ 2018 թվանից, Շուշանիկ Նորայրի Հովհաննիսյանը՝ 2022 թվականից, Սյուզաննա Անդրանիկի Շահբազյանը՝ 2022 թվականից (հիմք՝ 2022 թվականի նոյեմբերի 30-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառվախծ անձանց վերաբերյալ N 22102102073 տեղեկանք և «Գարուն» համատիրության 2022 թվականի դեկտեմբերի 6-ի N 137 տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացի՝ Անդրանիկ Ռուբիկի Շահբազյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիու կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ: (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 24-ի N ԱՏ-24112022-99-0319 տեղեկանք):

ե) Քաղաքացի Անդրանիկ Ռուբիկի Շահբազյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Ա.Խաչատրյան 31 շենք թիվ 48 հասցեի բնակարանը վարձակալել է 1991թվականի հունիսի 1-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ

ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության

բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Անդրանիկ Ռուբիկի Շահբազյանի լիազորված անձ՝ Սեյրան Վարուժանի Սահակյանի դիմումը բավարարել:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ք.Գյումրի Ա.Խաչատրյան փողոց 31 շենք թիվ 48 հասցեի 94.90 (իննսունչորս ամբողջ իննսուն հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

   1) Անդրանիկ Ռուբիկի Շահբազյանին ծնված՝ 1986 թվականին

   որպես սեփականություն:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել քաղաքացի՝ Անդրանիկ Ռուբիկի Շահբազյանի հետ նվիրատվության պայմանագրի կնքման համար ներկայացուցիչ:
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի Անդրանիկ Ռուբիկի Շահբազյանին :
4. Քաղաքացի՝ Անդրանիկ Ռուբիկի Շահբազյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Անդրանիկ Ռուբիկի Շահբազյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

ԱՐԹՈՒՐ ՊԱՊԻԿՅԱՆ

Համայնքի ղեկավարին փոխարինող **Ա.ՊԱՊԻԿՅԱՆ**

2023թիվ Գյումրի համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հունվարի 2023 **թվական** N 35-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՎԵԼ ԻԼՅԻՉԻ ԳՅՈՆՋՈՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Սամվել Իլյիչի Գյոնջոյանը (անձնագիր՝ AN 0685053, տրված՝ 21.10.2013թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Մանուշյան փող. 18ա շենք թիվ 11 բնակարան հասցեում (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2022 թվականի դեկտեմբերի 6-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Մանուշյան փողոց 18ա շենք թիվ 11 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իրեն որպես սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2001 թվականի հուլիսի 18-ի թիվ 430 որոշման համաձայն Գյումրի համայնքի Մանուշյան փողոց 18ա շենքի թիվ 11 բնակարանը հատկացվել է քաղաքացի Սամվել Իլյիչի Գյոնջոյանին և տրվել թիվ 11 միասնական օրդերը:

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2001 թվականի հուլիսի 18-ի թիվ 430 որոշմամբ տրված թիվ 11 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 220163016433 տեղեկանքը, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2022 թվականի նոյեմբերի 30-ի տեղեկանքը, Սամվել Իլյիչի Գյոնջոյանի անձնագրի պատճենը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2022 թվականի դեկտեմբերի 6-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2022 թվականի դեկտեմբերի 29-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Սամվել Իլյիչի Գյոնջոյանի մասնակցությամբ,

նրան բացատրվել են օրենքով իրենց վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Ք. Գյումրի Մանուշյան փողոց 18ա շենք թիվ 11 հասցեի 58.35 (հիսունութ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1132704 վկայական):

բ) Գյումրի համայնքի Մանուշյան փողոց 18ա շենք թիվ 11 հասցեի բնակարանը 2001 թվականի հուլիսի 18-ից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2001 թվականի հուլիսի 18-ի թիվ 430 որոշում):

գ) Շիրակ Գյումրի Մանուշյան փողոց 18ա շենք թիվ 11 հասցեում հաշվառված բնակվում են քաղաքացիներ՝ Սամվել Իլյիչի Գյոնջոյանը 2006 թվականից, Ռոմիկ Սամվելի Գենջոյանը 2016 թվականից, այլ անձանց օգտագործման և տիրապետման իրավունքներ գրանցված չեն (հիմք՝ 2022 թվականի նոյեմբերի 30-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ թիվ 220163016433 և «Գյումրի Կենտրոն» համատիրության տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացի՝ Սամվել Իլյիչի Գյոնջոյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, վերոնշյալ քաղաքացու կողմից 1998թ.մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ, (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2022 թվականի դեկտեմբերի 5 N ԱՏ-05122022-99-0311 տեղեկանք):

ե) Քաղաքացի Սամվել Իլյիչի Գյոնջոյանը Գյումրի համայնքի Մանուշյան փողոց 18ա շենք թիվ 11 հասցեի բնակարանը վարձակալել է 2001 թվականի հուլիսի 18-ից այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն

է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և(կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Սամվել Իլյիչի Գյոնջոյանի դիմումը բավարարել:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ք. Գյումրի Մանուշյան փողոց 18ա շենք թիվ 11 հասցեի 58.35 (հիսունութ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության

եղանակով օտարել քաղաքացի՝

1) Սամվել Իլյիչի Գյոնջոյանին ծնված 1955 թվականին

որպես սեփականություն :

2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել քաղաքացի Սամվել Իլյիչի Գյոնջոյանի հետ նվիրատվության պայմանագրի կնքման համար ներկայացուցիչ:
3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի Սամվել Իլյիչի Գյոնջոյանին :
4. Քաղաքացի Սամվել Իլյիչի Գյոնջոյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սամվել Իլյիչի Գյոնջոյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

Համայնքի ղեկավարին փոխարինող **Ա.ՊԱՊԻԿՅԱՆ**

2023թիվ Գյումրի համայնք